

Unpaved to date

Synflin to Synflin

1905

891.99

S-66

13 АПР 2011

~~15-1492~~

КАМЕНСКОЕ  
~~1857~~  
БИБЛИОТЕКА-ЧИТАЛЬНЯ

АЛЕКСАНДРОП. ГОРЬДСКАЯ  
Уѣха кн. р. 15 к., пер. 08 к.  
БИБЛИОТЕКА-ЧИТАЛЬНЯ

КАМЕНСКОЕ  
БИБЛИОТЕКА-ЧИТАЛЬНЯ

19 APR 2011

891.99

13 APR 2011

10/

5-66

ՎԱՀԱՆ ՏԻՐԱՑԵԱՆ

UY

# ՄՏՔԵՐ ԵՒ ՄՏՔԵՐ

№ 1

1007  
322336  
ամբ. 17.285

Համարը  
Մի երազ  
Մի հոգու սանջանիք  
Անցորդի յայտ

АНДРОПОЛЬСКАЯ ГОР  
№  
ЧИТАТЕЛЬСКАЯ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեկտրոնային «ՀԵՐՄԷՍ» ընկ., Մազարևան փ.15.

1905

(104)

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԼՍՀՆ - ՍՍՐԱ  
Պ. Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆ  
ՍՅԱՆԿԱՎԱՆԻ ԱՆՈՒՄ

23 JUL 2013

ՄԱՐԿԱԿԱՆ ՊԱՆՈՒՆՈՒՄ

Дозволено цензурою. Тифлисъ, 23 февраля 1905 г.

## ՀԱՄԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Նա կոչուում էր Աղբիւր:

Եւ բանի դեռ չէր ճանաչում նա մարդ արարածը, նրա աչքերը ցոլում էին ինչպէս աղբիւրի վճիտ շուրը՝ հազարաւոր փայլուն ու ջինջ ճառագայթներ արձակելով:

Օ՛, որքան յստակ էր նա. որպիսի անմեղութիւն էր արտայայտում նրա ամեն մի շարժումը: Եւ երբ ժպտում էր նա բանալով վարդագոյն շրթունքները, երևում էին նրա երկու շարք մարդարտանման մանր ատամները, որոնց սպիտակ փայլը երկու շրթունքների մէջ, պատկերացնում էին ամենագեղեցիկ և անմեկին ստեղծագործութիւնը:

Որքան հրճուում էր իմ հոգին, ամեն անգամ երբ տեսնում էի նրան:

Ու մըմնջում էի.

«Աղբիւր, երջանիկ է այն մարդը, ով կ'արժանանայ ըմպելու քո անմահական նեկտարը, սէրը»:

Սէր. արդեօք այն սէրը, որ տեսնում է մարդ ամեն քայլափոխին, որը հանդարտում է կրքերի յագուրդով, թէ՛ այն ոռմանների իդէալական սէրը, լի

տանջանքներով, յուզումներով և այն էլ անվերջ, ան-  
վերջ...

«Վնայ բեզ Աղբիւր, եթէ կուլ կըզնաս կոպիտ սի-  
բոյ...»

Որքան կոպիտ է մարդը և իւր սէրը:

Եւ միթէ այդ ասուածային ստեղծագործութիւնը  
յատկացած է տղամարդ էակին:

Զարհուրելի է:

Բայց չէ՞ որ ես ևս մի տղամարդ եմ:

Եւ Աղբիւրը վրդովում էր իմ հանգիստը, իր մըշ-  
տավառ կայտառութեամբ ու զւարթութեամբ:

Ինչո՞ւ նա ուրախ է և ես տխուր. նա փայլում է  
պայծառ արեգակի նման, իսկ իմ հոգին մռայլ է ու  
խաւար:

Պակասում է նրան կենսատու լոյսը և այդ լոյսն  
է Աղբիւրը:

Երբ նրա աչքերը—թէև անտարբեր—ուզղում  
էին իմ վրայ, ես կերպարանափոխւում էի և կնճիռ-  
ները անհետանում էին ճակատիցս. զգում էի, որ եր-  
ջանիկ եմ:

Բայց ինչո՞ւ նրա ակնարկը անտարբեր էր:

Փայլուն, խայթող, զրաւիչ բայց անտարբեր:

Ինչո՞ւ նա չէր բաժանում իմ զգացումները: Ին-  
չո՞ւ չէր տանջւում ինձ նման և ինչո՞ւ իմ աչքերի ա-  
ռաջ չէին խոնարհւում նրա ծով աչքերը:

Որքան էզօխտ ու տխմար եմ ես:

Կորչի նրա ուրախութիւնը, մարի նրա աչքերի  
կայծը, տանջւի հոգեպէս, որ հրճւի իմ եսը:

Ահա այն եմ ես,

Ահա այն է տղամարդ սեռի մեծ մասը:

Եւ սակայն թւում էր ինձ, թէ սիրում էի նրան:  
Իմ ամբողջ մտածութիւնը նրա շուրջն էր: Ամեն  
մի կնոջ մէջ նրան էի որոնում: Նա էր գրաւում  
միտքս արթուն ժամանակ և նա էր, որ քնոյ մէջ օրօ-  
րում էր ինձ իր ժպտացող աչքերով և այդ՝ ամբողջ  
գիշերներ:

«Աղբիւր, այրւում եմ»:

Նա ինձ չէր լսում, նա հեռու էր, անհաղորդ իմ  
տանջանքներին ու հեռու վրդովող մտքերից, հանգիստ  
օրօրւում էր քնոյ գրկում:

Հոգիս հիւանդ է:

Ես սիրում եմ. սիրում եմ նրան կոպիտ սիրով:

Ես կամենում եմ որ նա սիրէ ինձ: Ես կամենում  
եմ, որ իմ տանջանքներից նա էլ ստանայ իր բաժի-  
նը:

Եւ հետևում եմ նրան չարագուշակ սուտերի նման,  
իսկ նա միշտ անմեղ, միշտ յստակ, գէպի ինձ է ուզ-  
ղում իւր վճիտ հայեացքը ու վայրկենապէս չքանում  
են իմ զլխից վատ մտքերը, և ես բռնակալ ինստիկտ-  
ներով սողորուած մի տղամարդ, դառնում եմ հլու,  
անզօր այդ թափանցիկ հայեացքի առաջ, ստրկանում  
ու չքանում:

Որքան եղկելի եմ ես:

Մի թոյլ, տկար տասնևփեցամեայ երեխայ, կաշ-  
կանդում է մեզ, ստրկացնում ու ոչնչացնում:

Ես նրա ստրուկն եմ:

Արդեօք զգո՞ւմ է նա այդ և գիտակցօրէն տան-  
ջում է ինձ, թէ՞ զգալով հանդերձ, ծաղրում է իմ սէ-  
րը:

Ծանդր, դա սարսափելի է:

Ո՛չ, նա չի կարող այդ աստիճան չարագործ լինել, չէ՞ որ չարագործութիւն է մի մարդկային սիրտ վնասեցնել:

Այդքան անբիծ մի արարած չի կարող չարագործ լինել:

Նա անգիտակից է իմ սիրոյն: Եւ ես ստրուկս, չեմ վստահանում յայտնել նրան գաղտնիքս:

Ես լուում եմ:

Լուում եմ ու տանջւում:

Բայց չափը լցւած է: Սիրտս կարծես մամուլի տակ դրւած ճնշւում է, ուռչում և պատրաստւում է պայթել...

Ա՛խ երանի էր պայթէր, վերջ տալու համար իմ տանջանքներին:

**Ի՛նչ քաղցր, բայց սարսափելի են այդ տանջանքները:**

Անցաւ դարձեալ մի օր:

**Ես վճռեցի յայտնել նրան իմ սէրը:**

Մենք ընթանում ենք պարտիզի ստեբաւոր վայրերում:

Երեկոյ է: Ամարային մի լուսնկայ երեկոյ:

Թեթև քամին շփում էր ճակատս, կարծես խզճալով ինձ ու կամենալով հանդարտեցնել շփոթւած մըտքերս...

Նա դնում էր կողքովս միշտ ժպտուն ու ուրախ: Նրա շրջազգեստի խշրտոցը սառեցնում էր արիւնըս երակներինս մէջ:

Տէր Աստուած, որքան գրաւիչ էր նա:

Եւ յանկարծ պատահաբար, թէ դիտմամբ նրա թևը սեղմեց թևիս:

Ես սարսուցի:

Զգացի, որ երևան է դալիս կոպիտ սէրը, կիրքն էր դայլի ժանիքներով...

«Աղբիւր... Թանգագին, հրեշտականման էակ...»

Աղբիւրը կանգ առաւ:

Ստրուկը ըմբոստացել էր և սպանում էր արջը:

Սարսափելի բոպէ, երբ տէրը զգում է վտանդն և վախենում:

Տանջւած ստրուկի ըմբոստութիւնը թէև վայրկեանական, բայց բունն է:

Նա ամբողջ հոգով ձգտում է քայքայել շղթաները:

Կի՛ն դու, նա թէև ստրուկ, բայց տղամարդ է:

**Տղամարդ եմ ես ջլապինս բազուկներով ու կողտու թեամբ:**

Աղբիւրը փորձեց ժպտալ...

**Սակայն ժպիտը սառեց շղթաներում...**

Նա անշուշտ կարգաց իմ աչքերում իր դատաւճիռը:

Աղբիւրը դողում էր ցրտահարի նման:

Ես հրճւում էի, կլանում աչքերով այդ դողողուն իրանը:

Ես զգում էի, որ թօթափել եմ ստրկութեան շղթան:

Ես տղամարդ էի և կի՛նը խոնարհում էր իմ առաջ:

Օ՛, ի՛նչ լիտի բաւականութիւն...

«Աղբիւր, դու ի՛նչ ես, ես պաշտում եմ քեզ... ամիսներ ամբողջ կրել եմ քո պատկերն իմ հոգում...»

դու պարտաւոր էիր տեսնել այդ... Աղբիւր, ես այրուում եմ... վերջ տուր տանջանքիս: Աղբիւր, քո աչքերը լի են կրակով: Նրանց կայծը ինձ խելագար է դարձրել... Աղբիւր թանգագին, մի համբոյր... առաջին համբոյրը որ քաղում եմ, գուցէ վերջ տայ իմ տանջանքին...

Աղբիւրը փորձեց դիմադրել...

«Երգւում եմ քեզ Ստեղծող Ամենակարող Աստուծով, որ բռնի կըկորցնեմ այդ համբոյրը քո վարդազոյն շրթներից, եթէ կամովին չես տայ այն՝ իբրև գրաւական մեր սիրոյ...

Աղբիւրը ցնցւեց, դողաց և փայլեցին ժպտուն աչքերում, ջինջ մարգարտանման արտասուքներ, ցած գլորւեցին կաթիլ առ կաթիլ, պղտորելով այն մաքուր յստկութիւնը, որ կեանք էր պարգևել ինձ:

Որքան սարսափելի են կոյսի արտասուքները, որոնք միակ զէնքն են այդ տկար արարածներին...

Բայց և որքան հրապուրիչ են նրանք մարդ-զազանի համար:

Ես խելագարութեան զէնիտին էի հասել:

Ջրածիզ ձեռներով բռնեցի նրա դողացող թևերից՝ սեղմեցի կրծքիս այդ քնքոյշ իրանը ու կուրացած՝ հպեցի շրթունքս այն քնքոյշ շրթներին, ծծելով անմահական երկնատուր նեկտարը.

Խեղճ Աղբիւր...

Թուլացած, դիմադրելու անկարող, ճիչը խեղզած կոկորդում, նա հեծկլտում էր դառնադի...

Ես չէի տեսնում. ես կուրացել էի:

Ո՛վ թշուառ, անօգնական Աղբիւր:

Երկամր տևեց այդ բոպէն:

Անշուշտ՝ որովհետև իմ շրթները չէին յագնում և արիւնս չէր հանդարտուում:

Քայլերի ձայն...

Ես գունատուած ուղղեցի ու քարշ տւի երկլիւղից երեքացող Աղբիւրին, որը առանց զիտակցութեան հետեւեց ինձ:

Դուրս եկանք այգուց...

Ծովի զով քամին հովացրեց այրող ձակատս:

Ես խելագար քայլերով յառաջանում էի, ճնշած բռնի կորզւած երջանկութեան բռնի տակ:

Աղբիւրը գնում էր կողքովս նոյնպէս երեբուն, բայց ընկճւած, խոնարհած աչքերով...

Լուսինը լանում էր իր լուսով նրա դէմքը:

Նա գունատ էր:

Շրթունքը փակ էին. նա չէր ժպտում:

Աչքերի անկիւններում երևում էին դեռ չըջորացած արտասուքի կաթիլներ...

Այդ կաթիլները վրդովեցին ինձ...

Ես ճնշեցի մի զարհուրելի մտքից:

Այդ արտասուքի պատճառը ես էի:

Ես ոճրագործ էի...

Ու չըացաւ ժպիտը Աղբիւրի աչքերից: Կորաւ նրա ուրախութիւնը, զուարթ անհոգութիւնը:

Աղբիւրի ծով աչքերը արտասուքի ծով դարձան: Ինչո՞ւ:

Ի՞նչ իրաւունքով խլեցի նրանից հոգու անդորրութիւնը:

Ինչո՞ւ մոլորեցրի այդ յստակ միտքը:

Ինչո՞ւ պղտորեցի թշուառ Աղբիւրի ջինջ ջուրը:

Աւաղ Աղբիւր:

Կորաւ նա ինձ համար... ես ատելի եմ նրան...

Նա ատում է ինձ:

Ես չեմ տեսնի նրա աչքերի նախկին պայծառութիւնը...

Ես զրկեցի նրան այդ պարգևից:

Կոպիտ, լկտի տղամարդ. էգօրիստ Դօն-Փուան:

Ես մի լկտի Դօն-Փուան եմ:



## Մ Ի Ե Ր Ա Ձ

Կեանք.

Կրքեր յուզող, հողին ալէկոծող կեանք. ահա նրա որոնածը:

Անարատ, բոցավառ զգացմունքներով տոգորւած, կեանք չըճաշակած տղամարդ...

Այս էր նրա ցանկութիւնը:

Բոլոր մարդիկ երևում էին նրան թոյլ, անզգայ...

Գնայուն մեռեալներ...

Այն չեն, ինչի ուր ձգտում է նա իր ամբողջ էութեամբ. ամենքը մարած աչքերով. սառն, յոգնածութեան զրոշմով...

Թոյլ հոգեպէս և ֆիզիքապէս...

Ամենքն էլ յագեցած... Ժամանակից վաղ հասունացած, կորացած մէջքերով և դանդաղ ու յոյլ շարժումներով... և դա արբուն հասակ մտնող երիտասարդից, մինչև քառասուն տարում արդէն զառամեալ ծերունու ապաւորութիւն թողնող տղամարդը...

Ուրեմն ո՛ւր որոնէ յստակ և մաքուր կիւնը իր զգացմունքներին պատասխանող մի...

Մի տղամարդ... տղամարդի բոլոր յատկութիւններով...

Ո՞ւր...

Օրօրոցում...

Օրօրոցից հսկել և թոյլ չտալ նրան գլորել այն հոսանքի մէջ, ուր մարդիկ կարճ ժամանակում սովորում են կեանքը ճաշակելու արուեստը և շատ կարճ ժամանակումն էլ հիասթափուում...

Բայց դա էլ ունի իր արգելքները...

«Մինչև խոտը բուսնի... առակը մի փոքր հնացել է»:

Այդ է ասում բանաստեղծներից ամենահսկան... Շէքսպիրը...

Ուրեմն ո՞ւր որոնել...

Նա կեանք է ուզում, շնչել է ուզում. նա ոգևորւում է մուսանների քարոզած սիրով...

Հոգին պատրաստ է փարելու մի սիրելի արարածի...

Բայց երկիւղ է կրում, որ իւր ընկերուհիներէից շատերի նման հիասթափւելի...

Հիասթափութիւնը սարսափելի է...

Անծանօթ մի երկիր... մի երեակայական դրախտ, որին տիրապետել ձգտում է ամբողջ աշխարհը...

Եւ յանկարծ...

Դժողք ու քաճա...

Այդ է աշխարհը...

Նա զգում է և տեսնում. նա պարզ կերպով նըկատում է, որ միշտ ու միշտ զոհաբերութիւն կատարողը եղել է կինը...

Բայց նա չի կամենում, ուզում է մի նոր դարաշրջան ստեղծել... ուզում է վերափոխել բարքերը և մարդկանց բնազդները արմատախիլ անել...

Ինչո՞ւ կինը, որ բռնակալ է սիրոյ մէջ, որ ինքն-իշխան տիրապետողն է տղամարդ արարածին, որ կարող է մինչև խելագարութիւն, մինչև նոյն իսկ ինքնասպանութեան հասցնել նրան միմիայն մերժելով— այնուամենայնիւ զոհում է իրան տղամարդին:

Մաքուր և անարատ կին, փչացած և յագեցած տղամարդ...

Միշտ և միշտ...

Բայց նա հպարտ է, երգել է կուլ չըգնալ ընդհանուր օրէնքի ոյժ ստացած աշխարհային կանոններին...

Նա զգում է, որ ինքը բարձր է շնորհքով, գեղեցկութեամբ, զգացմունքների զեղունութեամբ և պէսպիսութեամբ...

Տղամարդը չնչին է. հլու և ստրուկ, ոտքերի տակ սողացող գարշելի զեղուն, քանի դեռ չէ տիրապետել գեղեցկութեամբ և շնորհքով լի էակին, իսկ այնուհետև բռնակալ...

Նզովք...

Ինչո՞ւ չը ջախջախել այդ մարդկային օձերի գանգերը, մինչ նրանք ստորաքարշ սողում են գետնի վրայ...

Գրաւիչ է կինը, երգում են նրա համար զոհել պատիւ, հարստութիւն, կեանք, պատկերացնում են իրանցից հերոսներ և հսկաներ, անձնագոծ բարեկամներ, լիզում են նրա ոտքերի փոշին... Բայց ինչո՞ւ այդ ամենքը ցնդում և մի երկվայրկեանում երբ...

Երբ ամենայն ինչ կատարեալ է լինում...

Ահա այս էր ուզում լուծել նա և չէր կարողանում: Նա զարգացած էր և դաստիարակւած... Նա

ուսանել էր փրկիչսովայութիւն, տրամաբանութիւն:  
Փրկիչսովայ և տրամաբան կին... ահա մի առեղծ-  
ուած, որի լուծումը աշխարհաբանութեան մէջ է, որը...  
Որը դեռ չէր սովորել...

Նա որոնում էր իր նմանը... նոյնքան յստակ ու  
անարատ, նոյնքան լի կրքով, չսպառուած ոյժերով,  
որը կարող լինէր կլանել իրան և իր ամբողջ էութիւ-  
նը...

Բայց չէր գտնում...

Օրերը բարդուում էին օրերի վրայ, դառնում էին  
շարաթիւեր, ամիսներ ու տարիներ և սահում էին նոյ-  
նութեամբ, առանց նրա առաջ բերելու, փչացած բար-  
քերից գերծ մնացած մի երիտասարդ...

Բայց նա միշտ որոնում էր... որոնում մինչև որ...

Մինչև որ մի օր դիտեց դէմքը հայելու մէջ...

Կնճիռներ...

Ո՛չ, այդ անկարելի է...

Դժբախտաբար կարելի է... հայելին է այդ վկա-  
յում...

Թշուան...

Նա սկսում է գահավէժ քայլերով իջնել կեանքի  
սանդուխից դէպի ցած... այնտեղ ուր ամեն մի կին  
տեսնում է մի վիհ և որից սարսափում է աւելի քան  
մահից...

Մահը գեղեցիկ և մատաղ դէմքի վրայ, ճմլում է  
մարդկանց սիրտը...

Այդ էլ մի մխիթարութիւն է... բայց այժմ...

Այժմ նա սկսում է համոզւել, որ այնուամենայ-  
նիւ զոհողը պէտք է լինի կինը...

Աշխարհի ստեղծած օրէնքների յիմար դասակար-  
գութիւն...

Բայց այդ այդպէս է... ճմարտութիւնը երևում է  
նրա աչքերին իր սառն պատկերով...

Նա սարսափում է:

Նա պատրաստուում է զոհել իրան...

Փառք Աստուծոյ...

Բայց ափսոս...

Նրան որոնող չկայ...

Պառաւած աղջիկ... Թէև զարգացած, Թէև փրկի-  
սովայ և տրամաբան, բայց չի որոնուում...

Տղամարդը կամենում է միշտ Թարմը, Չահելը,  
սիրունը...

Իսկ նա...

Աւանդ...

Կեանք...

Կրքեր յուզող, հոգին ալէկոծող կեանք, այս էր  
նրա որոնածը...

Անարատ, բոցավառ զգացմունքներով տոգորւած,  
կեանք չճաշակած տղամարդ, այս էր նրա ցանկացա-  
ծը...

Բայց... դա...

Երազ էր...

### ՄԻ ՀՈՒՅՈՒ ԾԱՆՋԱՆԻՐ

Գեղեցիկ էր այն պատշգամբ...

Ուղիղ պատուհաններիս դիմացն էր գտնուում և շարունակ տեսնում էի նրան այնտեղ, ամարային տօթ օրերի առաւօտները:

Ալեծուփ մազերը մի վարդագոյն ժապաւէնով թեթև կերպով կապած, յենուում էր պատշգամբի վանդակապատին, ձեռք ծնօտին, լուռ ու մտախոհ դիտում էր հեռուն...

Միբուն էի այդ հրեշտակային էակին, մարդկային բոլոր զգացմունքներով:

Հիանում էի հեռուից դիտելով այդ բարեձև իրանը, որ շագանակագոյն կոկիկ հագուստի մէջ, ևս աւելի զմայլելի էր դառնում:

Ախ, որպիսի երազներով չէ զբաւուել միտքս, դիտելիս այդ յստակ ճակատը, աչքերի խոր հայեացքը, որ միշտ տարօրինակ կերպով ճնշել է իմ հոգին:

Ինչ էրազայն շեղանքներ և շեղանք զգացմունք: Զակատի նուրբ սեղանայեաց կնիքը ամբողջացնում էին այդ աստուածակերտ հրաշափեսի մեծ թիւի:

Ես ինձ չէր տեսնում, կամ թուում էր թէ վեր

տեսնում. նա չէր կարող հասկանալ, թէ հոգեկան որպիսի ալեկոծութիւն էր բարձրանում իմ կրծքում ամեն անգամ, որ նա դուրս էր գալիս պատշգամբ, միշտ խոհուն, միշտ թախծալի... միշտ երագող... միշտ խորհրդաւոր. և յառում էր կենսալի հայեացքը հեռուն... կարծես այնտեղ բնութեան ծոցում որոնելով իր խոհուն մտքերի և երազների իրական պատճառը:

Ո՞ւր էր նայում նա այդպէս երկար... անթանթ... Ի՞նչն էր ալեկոծում նրա սիրտը. իզուր էի հետևում նրա ակնարկին.. իզուր էի որոնում նրան զբաղեցնող մտքերի բանալին...

Այդ բանալին թագնւած է նրա սրտի ամենախոր ծայրերում..

Եւ միթէ ամենախորթափանց աչքն իսկ կարող է թափանցել այնտեղ..

Կանացի սիրտ:

Ահա մի լարիբինթոս:

Նրա հանգոյցը տիրոջ ձեռքին է..

Այնուամենայնիւ ես ձգտում էի լուծել այդ հանգոյցը.. և որքան յոգնեցնում էի միտքս, այնքան աւելի մտքերը-մինը միւսին հակասող, խառնուում էին զլիսիս մէջ և գոյացնում մի անտանելի խառնուրդ:


Արդեօք սիրում էր նա:

Ձէ որ արբուն տարիքումն էր:

Հրաշալի տարիք. փայլուն, բռնակալ, ստրկացնող,

այն, օգտուիք նրանից խոհուն կերպով... Ահա մի... հանցիկ սիրտը կտոր է աշխատանքի պիտանքի այդ զգացմունքի... Ինչպիսի աչքերով հրեշտակ:

1007  
32336



որի մագիլները աւելի ևս սուր են քան ամենասուր պղպատեայ սլաքները:

Սիրտը դողդողում է թոյլ, ուժասպառ, ինչպէս բաղէի ձեռին ընկած դեղձանիկը:

Ճիւղաղի մագիլները սեղմում են նրան և ճնշում և տանջում և գալարում:

Կաթիլ առ կաթիլ հոսում է նրանից կարմիր արիւնը, իսկ նա այնուամենայիւ հաճութեամբ ենթարկւում է նրան, իր քնքոյշ նետրդերով դառնում է այդ ճիւղաղի ստրուկը...

Ստրուկ առանց կամքի, առանց գատողութեան:

Այ թէ ինչու նա կլանում է մարդկային սիրտը լիովին, որովհետեւ ոչնչացնում է ամեն մի գատողութիւն... բայց... դուցէ չէր սիրում:

Գուցէ նրա միտքը, նրա գոյութիւնը դեռ շատ հեռու էր այդ զգացմունքին ենթարկուելու մտքից...

Ուրեմն ինչո՞ւ էր նա այնքան մտախոհ... ինչո՞ւ նրա ակնարկը, հոգեկան յուզմունքների արտայայտութիւն էր:

Ա՛խ այդ ակնարկը:

Ամեն անգամ եւ աշխատում էի որսալ այդ ակնարկներից դէժ մինը... *դէժ մի անգամ: Գուցէ մէկը յոռտախոհ էի լինում և ձեռնում և ամառում և բառիս:*

Այո, արտասուք, դա՛ռն արտասուք... *Տրտէ: Երբքաբարանաւ հաճեցինք: Արտք ծորելով ակնակն: Կանգնում կ'աւ գաթիլայի, Կ'աւք ծորելով անքեթեթ: Կարճես կարճ ժամանակով տանում են իրանց չեա մեք հոգեկան գառնութիւնները:*

Եւ իւրաքանչիւր անգամ արթնանում էի արտաւտանքը, աչքս յառած պատշգամին, լի նոր յոյսերով, լի նոր երազներով, կազմուրած հոգիս՝ կրելու համար

նոյն վիշտը, որին ես համարեմ ընտելացել էի և թւում էր թէ առանց դրան ես չէի ապրի և ոչ իսկ մի երկվայրկեան:

Դա սիրոյ վիշտն է:

Պօէտների գրչի աղբիւրը և ներշնչողը:

Եւ ինչո՞ւ այդ սպասողական դրութիւնը իր դառնութեան հետ քաղցր է, անչափ քաղցր... տանջող քայց քաղցր, ինչպէս սիրելիի ձեռքից անզգուշաբար ստացուած դաշոյնի վէրքի կսկիծը:

Կսկծում էր սիրտս, բայց սփոփւում, որովհետեւ դա պատճառում էր նա, պատշգամի աղաւնի՛ն, մաքուր և սպիտակ աղաւնի՛ն:

Աղաւնի՛.

Թռչունների մէջ անմեղութեան տիպարը, իսկ կանանց մէջ ամենայտապը:

Այդպէս էր թւում նա ինձ:

Այդպէս էր նա անշուշտ:

Այդ պայծառ և հպարտ ճակատը, աչքերի մեղմ հայեացքը, նրա ձևերը, շարժումները, նրա գոյութեան մինչև ամենափոքր մասնիկը պատկերացնում էին յըստակութիւն, ձիւնի և ադամանդի անխարդախ յստակութիւնը:

Ա՛խ մարդկային թշուառ սիրտ:

*Ազգանս Կրկունս եւ զոր զոր ձեռանս եւ Գուցէ չեա խորտակում և երկուն: շատ երկայր ևս ամառում այն բուրբ շարժքը: ոք բնում է նրանից: ով եզել է քո դանիծը, հրեշտականման դանիծը:*

Իխում է նրանից, թէև անպիտակից է նա:

Եւ ինչո՞ւ գիտակից լինի. ես այդ չեմ կամենում: Դի սիրտը կամենում է տանջել գաղտնի, աչքերս

կամենում են դիտել նրան շարունակ, առանց նկատու-  
ւելու նրանից:

Դրանում է կայանում իսկական սիրոյ հմայքը:  
Այդ է սիրային քաղցր և թունաւոր ասնջանքը, ան-  
գնահատելի և ցանկալի տանջանքը:

Ես յափշտակութեան գագաթնակէտին եմ հասել:  
Նա նայեց ինձ.

Օ՛, որպիսի հայեացք. այդպիսի հայեացք չէ ու-  
նեցել ոչ մի կին:

Նրա ակնարկը ծակեց իմ սիրտը:

Նա թափանցեց հոգւոյս խորքը, կարծես կամե-  
նալով կարգալ ամեն ինչ:

Եւ թւեց թէ կարդաց:

Նրա աչքերը խօսում էին ինձ հետ պարզ, հաս-  
կանալի կերպով:

Որքան արհամարհանք, որքան յանդիմանութիւն  
էին թագնուած նրանց մէջ:

«Ինչո՞ւ ես վրդովում իմ հանգիստը, տղամարդ:  
Ես խոյս եմ տալիս հոգեկան յուզումներից և աւելի ևս  
այն ժամանակ երբ այդ գալիս է ձեզանից: Թող ինձ  
հանգիստ... Ես մատաղահաս եմ, բայց կրել եմ յու-  
զումներ, տանջանք ու վիշտ, անց եմ կացրել անքուն  
գիշերներ և թափել արտասուք: Իմ ականջները լսել  
են ամենաջերմ մրմունջներ, այնքան շոյիչ, այնքան  
փայփայիչ... Լսել եմ յաւիտենական հաւատարմութեան  
մասին խօսքեր, որոնց չի արտասանել ամենաճարտա-  
սան լեզուն իսկ: Թող ինձ հանգիստ:

«Ես ջախջախուած եմ... սիրտս խորտակուած...  
դաւաճան տղամարդը ճնշեց նրան և մեռցրեց:

«Մարել է կայծը աչքերիս, կրակը սրտիս, մարել  
է կրակը իմ ամբողջ գոյութեան մէջ: Թող ինձ հան-  
գիստ»:

Եւ հանդարտ առանց շշուկի նա դարձաւ և անե-  
քեութեամբ աչքիցս:

Երկնք, անթարթ նայում էի դէպի այն կողմը,  
որտեղից անհետացաւ նա... հոգիս ուզում էր դուրս  
թռչել...

Մի թէ չէր վերադառնալու:

Ես պատրաստ էի գոռալ ըստր աղիքներով:

Ես պատրաստ էի գլխիվայր նետուել փողոց պա-  
տուհանիցս:

Ինչէր պատրաստ էի տալու, միայն թէ կրկին  
տեսնէի նրա հայեացքը:

Ո՛չ:

Նա չը վերադարձաւ:

Օրեր անցան. ծանր, տանջանքով լի օրեր:

Ես նրան չըտեսայ կրկին անգամ:

Մարդկային ձեռքը քայքայել էր նրան:

Ես անէծք կարդացի ինչպէս մի գուհիկ, անիծեցի  
բնութիւնը, ճակատագիրը. ամբողջ աշխարհը, ինքս  
ինձ...

Բայց նրան...

Ես պաշտեցի նրան:

Ես պաշտում եմ նրան և տանջուած եմ լճու,  
լալիս լճու:

Իմ աչքերի առաջ շարունակ ցոլում է նրա հայ-  
եացքը:

Ա՛խ այդ հայեացքը...

Առաջին և վերջին անգամ տեսայ այն վերջին օրը:

## ԱՆՅՈՐԴԻ ՅՈՅՍՐ

Աւազուտ անծայր, երկար ուղիով, գնում էր անցորդն ծանր քայլերով... քրտնաթոր ճակատն թեքով սրբելով, նա ախ էր քաշում, հառաչ արձակում, բայց կանգ չէր առնում. ու լճու, մտախոհ շարունակում էր նա ճանապարհը, սաստիկ նեղուելով այն ծանր բեռից, որ նա տանում էր ուսերի վրայ:

Խեղճ թշուառ անցորդ... ցաւալի վիճակ... նա խոստացել է տանել այդ բեռը, երգում էր արել ամենքի առաջ, որ այդ յոգնատանջ ու անծայր ուղին պէտք է անցկենայ շալակած ուսին այդ ծանրութիւնը, որը առաջուց թւում էր նրան թեթև ու չնչին: Բայց այն ժամանակ կորովի էր նա, ունէր կրծքում ոյժ և ոյժ թեւերում... նրան թւում էր ոչ թէ այդ ուղին, այլ երկբազնդի ամբողջ շրջանը նա կը կատարէր առանց յոգնելու, առանց տրտունջի, առանց վշտերի, առանց հառաչի, բայց այժմ... աւազ... նա սխալուած է... նա պարզ տեսնում էր, որ ծանր բեռը ճնշում է նրան... ճնշում է նրան այն աստիճանի, որ նա պատրաստ է գետին գլորել, ոտքով տրորել և ամբողջ հողու մաղձը դուրս թափել... բայց ոչ... չի կարող... և կարծես մի ձայն խիստ, չարագուշակ, գոռում է, ճշում, տարափ է

տեղում և մի վայրկեանում նա կրկին ընկճուած, կըրկին տանջուած, շարունակում է իր ճանապարհը, անէծք կարգալով ճակատագրին...

Գնում է անցորդն... ու պարզ լսում է. սոսկալի խօսքեր, որոնք սլաքի նման ծակում են տանջուած սիրտը:

«Իրաւունք չունես դատապարտուած մարդ, դու «պարտաւոր ես տանել այդ բեռը... դու չես միակը... «ստեղծագործութեան առաջին օրից քո նախահայրը «տարաւ այդ բեռը... նա էլ տանջուեց, նա էլ քեզ նը- «ման անէծք արձակեց, ողբաց, արտասուեց, բայց չը- «յանդգնեց թօթափել բեռը: Առաջին մարդուց մինչև վերջինին այդ է վիճակուած, բայց թէ քո բեռը ուժի- «ցըդ բարձր է, դրանում միայն դու ես յանցաւոր. ա- «նիժիր դու քեզ, այրւիր, տանջուիր, բայց գնա յա- «ռաջ... քրտինքը ճակտիդ, արցունքն աչքերիդ, թա- «ւիծը սրտումդ, մըրկած հոգով գնա ու գնա և մի տըր- «տընջա»:

Եւ գնում էր նա, գնում էր յառաջ, բայց ոչ անտրտունջ:

Այլ թշուառ անցորդ, այլ ևս ոյժ չունի. թոյլ սըրունքները դաւաճանում են. գարշապարները երկար ուղիից թէև կոշտացած, բայց զարհուրելի ցաւ են պատճառում, ոտքի մատերը արիւնոտել են, ուսի թի- «ակը բեռից կորացած, հողս ու տանջանքից դէմքը կնճոտած, ճակատն խորշումած, աչքերն արիւնոտ նա ընկաւ գետին. բայց սարսափը, թէ մի այլ զգացմունք, ստիպեց նրան ուժասպառ ձեռքով պահել իր բեռը:

Նա ծոռնկ է չորել:

Բայց չարագուշակ շշուկը, նման մահացու շնչի գոռում է նրան:

«Գնան և գնան»:

Անցորդը վերջին ոյժը հաւաքած, մարդկային կամքից բարձր մի կամքով հրամայում է ամբողջ էութեան լուս հնազանդուել դատող ուղեղի թելադրութեան:

«Գնան և գնան»:

Գնում է գնում, անվերջ ու անծայր երկար ուղիով:

Յուսահատութիւնն ուտում է նրան, լափում է նրա ողջ էութիւնը, դատողութիւնը տեղի է տալիս մի այլ բնագոյի... նա պատրաստուում է վերջ տալ իր կեանքին:

«Անէ՛ծք քեզ երկինք, որ ստեղծեցիր աշխարհն ու «մարդիկ, ծնունդն ու մահը, կեանքի հմայքը, վիշտն «ու տանջանքը: Հրապուրանքի բողոք սքողուած զըհ-«ւանք է կեանքը... անէ՛ծք քեզ երկինք, երիցս անէ՛ծք «ճակատագրին, որ վիճակեց ինձ ծանրագոյն խաչը... «անէ՛ծք երջանիկ, ոչ դժգոհ մարդկանց, որոնք ծաղ-«րում են մեզ, թշուառական արարածներիս, անէ՛ծք, «բիւր անէ՛ծք մարդկային սեռին, անէ՛ծք աստղերին, «արև ու լուսնին ու տիեզերքի սքանչելիքին անէ՛ծք ու «նզո՛վք»:

Անգիտակցաբար շլաձիգ ձեռքը սեղմում էր բեռին... մի թոյլ ու անզօր հեծկլտանք լսեց... մարդկային կեանքն էր այդպէս թառանչում, այն կեանքը՝ որին նա շղթայուած էր:

Նա ուշքի եկաւ. հանեց գրպանից սրածայր դաշոյն, դրեց իր սրտին և...

Տեսաւ հեռուից, մշուշի միջին մի փալիլուն տեսիլք... նա գեղեցիկ էր, աւելի սիրուն քան ծառն ու ծաղիկ, քան յստակ ձիւնը աւելի ճերմակ և աւելի ջինջ, քան ջինջ վտակը, դէմքը արեգակ, աչքերը աստղեր... յոնքը ծիածան, շրթները աղբիւր անգին նեկտարի ու մանրագործի:

Հոգեզմայլ վայրկեան... անցորդի մարմնից մի սառսուր անցաւ, մոռացաւ ռիւր, բիւր անէ՛ծքները, մոռացաւ վիշտը, յոգնածութիւնը. մոռացաւ թշուառ տարաբախտ կեանքի անհուն տանջանքը... մոռացաւ բեռան ճընշող կշիռը... աչքերից փայլակ, կայծակ շողացին...

«Ո՛վ թշուառ անցորդ»

Օ՛ր անմահ Աստուած, այդ քնքոյշ ձայնը, աւելի քնքոյշ, աւելի յուզիչ, քան ամենանուրբ քնարի ձայնը ծակեց իր սիրտը...

«Անցորդ, խղճում եմ թշուառ վիճակիդ, դու ճընշուած ես, կեանքդ քայքայուած, եկ իմ յետեից, «ուղին երկար է և դու միայնակ, բեռը քո ուսին, չես «րող հասնել մինչ նրա ծայրը... եկ իմ յետեից... ես «եմ քո կեանքի կէտ նպատակը, քո իդէալը. ես այդ «կարդում եմ քո աչքերի մէջ, քո գոյութեան մէջ... «իմ տեսքը անցորդ վերափոխեց քեզ, ոյժդ յետ եկաւ, «կորովի դարձար. թէ չես վախենում իմ հուր աչքերից, «թունաւոր շնչից, եկ իմ յետեից... կեանքն աննպա-«տակ, ունայն է, չնչին և տաժանելի... չունես քո մէջ «ոյժ, բարձր վեհ գործեր իրագործելու, չունես քո «մէջ ոյժ թշուառ մարդկութեան մի օգուտ տալու, «բայց ունես դու ոյժ ինձ հետեւելու, գէթ ունեցիր ոյժ «բեռդ քարշ տալու... Ես խղճում եմ քեզ և կամենում

«եմ թեթևացնել քեզ համար ուղին... եկ իմ յետևից»:

Գնաց գեղանին: Նո՛ւրբ, սքանչելի, մարմարիո-  
նից ճերմակ սրունքը խլում էր խեղճի ճնշուած կըրծ-  
քից, աղեխարշ հառաչ... սիրաբ ահուելի ելևէջ անում,  
բայց յոգնածութեան նշոյլը անգամ չկար նրանում:  
Նոր մարդ էր դարձել, թարմացած ոյժով նա հետևում  
էր այդ սքանչելի տեսիլքի հետքին:

«Կանգ առ աննման. թոյլ տուր զմայլուել գեղա-  
նի տեսքովդ, թոյլ տուր այրել ջր ջերմ կրակով,  
«թոյլ տուր արբենալ ջր էութեամբը»:

Տեսիլքը գնում ու խոյս է տալիս. միայն երբեմն  
մագնիս աչքերը յետ է դարձնում և խրախուսում:

Տարաբաղդ անցորդ. կրկնակի ուժով առաջ է  
գնում, սակայն չի հասնում... աղաչում, լալիս, կուրծ-  
քը պատառում, բայց և չի հասնում:

«Կանգ առ, օ կանգ առ ով աստուածային դու  
չքնաղ էակ»:

Եւ նա կանգ առաւ:

«Ինչ ես կամենում տարաբախտ անցորդ... չէ՞ որ  
«մարդ ես դու. դու կամենում ես արբել հմայքովս, իսկ  
հետոյ... յետոյ դու կըկորցնես ոյժդ, կորովդ. դու կ'ու-  
«բանաս ինձ... Ուղին երկար է և տաժանակիր... Վե-  
«րևը երկինք, հեռուն հորիզոն... ծայրը չես գտնի...  
«Ի՞նչն է ստիպում քեզ՝ ապրել կրկին... պողպատ դա-  
«շոյնը շոյում էր ձեռքիդ և դու կամեցար վերջ տալ  
«քո կեանքին... ես փրկեցի քեզ... բաւականացիր քեզ  
«ընկած բաժնով և հետևիր ինձ... մի գուցէ մի օր...»

Չը վերջացրեց, դարձրեց երեսը առաջ սլացաւ:  
Կոյսը անցորդի գէժքին լոյս տըւեց, լոյս տուեց կեան-

քին, ոյժ տուեց մարմնին կորով՝ սրունքին և նա  
հետևեց...

«Մի գուցէ մի օր...»

Աւաղմուտ, անծայր, երկար ուղիով գնում է ան-  
ցորդն, բայց ոչ յուսահատ. նա ախ չի քաշում, նա  
հետևում է չքնաղ տեսիլքին:

Դա իդէալն է...

«Մի գուցէ մի օր...»

Այո, ո՛վ գիտէ:

\* \* \*

Այո. ո՛վ գիտէ:

Ո՞վ գիտէ կեանքը, փաթորիկները, կեանքի  
պայքարը: Ո՞վ գիտէ հոգու վառ զմայլանքը և խոր  
վշտերը, ո՞վ գիտէ սբտի ելևէջները և փոփոխական  
դարձացքները... այո, ո՛վ գիտէ:

Կեանքը այդպէս է... գեղանի չքնաղ այն արա-  
բածը գերեց անցորդի հոգին ու միտքը... նա չէր  
մտածում գալիքի մասին... մի ոյժ մղում էր կրկնակի  
ուժով նրան դէպ յառաջ և նա ձգտում էր հասնելու  
նրան:

Դէժը փայլում էր արևի նման... յոյսի շողբերով  
վառվում էր գէժքը... նրան թւում էր թէ ինքն հսկայ  
էր, վիթխարի հսկայ... նրան թւում էր թէ շատ հեշտու-  
թեամբ կը ծակեր լեռը, կանցնէր հեղեղի, փոթորկի  
միջից, թէ կը պատասէր լափող հրդէհը, միայն թէ  
հասնէր չքնաղ էակին:

Եւ նա գնում էր, այրում տոչորում, բայց և  
չէր հասնում... Չէր յուսահատում... նրա մէջ մի  
ձայն շնչում էր միշտ:

«Գնահ, նա քոնն է:»

Դա թշուառ սիրտն էր:

Մսի մի զանգուած արիւնով լեցուն, բայց և որքան բարդ... որքան յուզումներ, որքան և կրքեր:

Սիրտը տանջանքի համար է տշուած... առանց այդ սրտի, մարդը ոչինչ է... առանց տանջանքի կեանքը աննշան...

Տարարանդտ անցորդ, դու երջանի՞կ ես... քիրտը ձակատիտ, շունչըդ կտրատուած, կուրծքըդ պատառուած. երջանի՞կ ես դու... տանջանքի բով ես ով մարդկային կեանք:

Ունայնութիւն ես և ոչնչութիւն:

Գնա և գնա:

Չքնաղ դիցուէի թշուառ անցորդին... դու այդ զգում ես... քեզ քաջ յայտնի է աչքերիդ թոյնը և ձգող ոյժը... դու շատ լաւ գիտես թէ ինչպէս ձվում, ոչնչացնում ես մարդկային սիրտը և նա փոխանակ նզովելու քեզ, օրհնանքի տարափ է տեղում գլխիդ... պատրաստ է զոհուել, գլուխը գնել ուղիի վրայ, թոյլ տալ ոտքերիդ տրորել նրան...

Ինչո՞ւ չես թոյլ տայ, որ նա մօտիկից գմայլի քեզնով... քո դէմքը հեռուից թէև մշուշում շողք է արձակում. ինչո՞ւ չես ուզում, որ դիտէ մօտից, կուրանայ աչքը, պատառուել սիրտը... իսկ այնուհետև, թէև կուրացած, թէև ջախջախուած, բայց երջանիկ է, ևս աւելի քան արքաները, քան մեծ մարդիկը:

Գնում էր շողքը անծայր ուղիով... նա զլանում է ակնարկը նոյն իսկ, նա խոյս է տալիս և հէզ անցորդը արհամարհում է իր ոյժը կամքի, ինքն իրա

աչքին թուում է վատթար, թուում է չնչին, թուում փոքրօրի...

Մի՞թէ չի հասնի:

Կրկրապատկում է դողող քայլերը, ամբողջ թութերով հևում է հևում և առաջ վազում:

Որքան վեհ է նա իր թշուառութեան, հեզ դրութեան մէջ, որքան բարձր է նա իր ուժեղ կամքի և ազնիւ ձգտման և այդ ձգտումը կատար հանելու բուն իղձի համար: Բայց որքան նուաստ, որքան չնչին է, աւելի չնչին քան գեանի փողին, համեմատելով չքնաղ էակի, իդէալի հետ:

Այո, բարձր է նա, քանի որ ինքը ձգտում է նրան: Ահա կարծես թէ մշուշը քիչ քիչ հեռուն փարատում և աստուածային գեղ կազմութիւնը ամբողջ երևում, այրում է թշուառ անցորդի հոգին...

Մի՞թէ իսկապէս այդ գէմքի ցոլքը կուրացնում է քո յետակ աչքը... Մի՞թէ իսկապէս քո թշուառ սիրտը ջանք գործ կը դնէ դուրս գալ պատեանից և ընկնել գետին և հոգևարքի ջլածիգ շարժամբ դառնալ մտակոյտ...

Այո, ո՞վ անցորդ... այո, կըհալուես նրա լոյս դէմքի ճառագայթներում...

Բայց թէկուզ հալուի՞ յառաջ է դնում... վաղուց է արդէն ինչ ծանր բեռը չի ճնշում ուսը... Նա մոռացել է: Նրա հայեացքը, ոյժն ու կորովը կենդրոնացել է դէպի նա միայն...

Մտածութիւնը, մարդկային խելքը, հոգու թըրթիւրը և նեարդերի մէն մի շարժումը, նրան է, նրան միայն պատկանում:

Ամբողջ աշխարհը, սուրբ բնութիւնը, նրա ստեղ-

ծած սքանչելիքը, կանաչ դաշտերը, ձիւնապատ լեռը, ալիկոծ ծովը, որոտն ու կայծակն իրանց վեհութեամբ նսեմանում են այն իդէալի, այն աստուածային էակի առաջ:

Ամեն ինչ նա է... նա է խաւարը, նա է և լոյսը, նա է տարերքը... նա, նա և միշտ նա...

Եւ եթէ նա է այդ «ամեն ինչը», ի՞նչպէս գուանցորդ ձգտում ես նրան:

Ձգտում է նրան. և առանց նրան ընդ միշտ կորած է: Եւ եղաւ վայրկեան, որ նա մօտեցաւ չքնադ էակին... ուժաթափ ընկաւ ծնկների վրայ, ձեռքը տարածեց և պաղատագին հայեացք նետելով, հայցեց մի ժպիտ... ժպիտ շրթներից... նա անկարող էր... մահուան քրտինքը պատել է ճակտին, դէմքը գունատուել, դողահար շրթամբ նա շնչում էր:

«Բաւ է, գթա ինձ»:

Իրցունին ժպտուն, դարձաւ դէպի նա... յանկարծ ժպիտը սառեց շրթներին... աչքերի առաջ երևան եկաւ մարդկային սիրտը հիւժուած, տանջուած, թշուառ անցորդի այրական դէմքը խեղաթիւրւել էր...

Երկնք, աւազուտ անծայր ուղիից ջլատուել էր նա, քաղցն ու ծարաւը մաշել էր նրան... նա մոռացել էր իր թշուառ հսր և նուիրւել էր իր իդէալին:

Իրցունին չոզեց... և վարդ շրթունքը նա մօտեցրեց թշուառ անցորդի դալուկ շրթներին:

Աւաղ ով հէզ մարդ:

Իսոն հոգևարքի մէջ է գտնուում, բայց գունատ դէմքը, մարած աչքերը, արտայայտում են և վիշտ և հրմայք:

Նա երջանիկ է:

Անողոր մահը իր դաժան դէմքով չի կարող սարսափ ազդել անցորդին... չի կարող խլել երջանկութեան այն անդորր ժպիտը, որ ըմբռնում են միայն երկուսը, անցորդը և նա:

Դողդոջուն կերպով թոյլ թևին յինսած նա բարձրացրեց ծանրացած գլուխն դէպի փրկիչը... դալուկ շրթունքը կամեցան քաղել վաղուց սպասուած միակ համբոյրը: շնչեց քաղցրաբոյր և անմահ շունչը, արբեց նրանով... բայց...

Համբոյրը չը քաղեց... երերաց դանդաղ, գլուխը ուժգին ընկաւ աւազուտ ուղիի վրայ, որտեղ դիցունհու չքնադ ոտքերը հեար էին թողել... և...

Ստուաւ հրճուանքից

Խաղաղ ժպիտը լուսաւորում էր անցորդի գունատ, ջղաձիգ դէմքը:

Եւ այդ դէմքի մօտ թախիծ էր պատել այն պայծառ դէմքին. դառն կաթիլներն չքնաղ աչքերից կաթկաթում էին մեռածի դէմքին:

Եւ իւրաքանչիւր կաթիլը, նրա սառած երեսին նոր լոյս էր սփռում...

Անցորդի հոգին էր դա սաւառնում նրանցից բարձր և ցնծում ուժգին:

Երկնք, շատ երկար, երկու էակներն նոյն դիրքումն էին աւազուտ, անծայր ուղիի վրայ:


Արևն իր կիզիչ ճառագայթներով, անձրևն իր լուռն փոթորիկներով, տարերքն ահուկի արհաւիրքներով, փայլակն ու կայծակն չըկարողացան բաժանել նրանց:

Նրանք միացել էին յաւիտեան:

Անցորդը խրեց զիցունու կրծքից բարախուն  
սիրտը...


Երջանիկ է նա:

1904 թ.



Մատենադարանի գրադարանի համարները  
համաձայն է նրան

1904 թ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0372137

58.826

1113

1224